թանալ հետևեալ կրօնական արարողութիւնների հետ՝

Նոքա տարին մի անգամ կատարում են սրբբաղան կրակը լուցանելու արարողութիւնը։ Ամբիոնին բոլոր գիւղի երկսեռ բազմութիւնը հաւաքվում է մի ընդարձակ յարկի տակ։ Այնտեղ պատրաստուած է լինում արդէն վառելիք յատկապէս արարողութեան համար պատրաստված կրակարանումը, ուր ուրիշ ժամանակ չեն վառում։ Երբ բոլոր բազմութիւնը ժողովուած է լինում, բաց են անում գլուխները և խորին հանդարտութեան մէջ աղօթում են լռելեայն հետևեալ մտքով՝ «ով երկնքի պարգև, որ ամեն օր իջնում ես երկիրը, միշտ ջերմութեամբ կեանք ես տուել մեր պապերին, և մեր հայրերին, հասցրել ես նոցա արտերը, պտուղները. կանաչացրել ես նոցա դաշտերը, ծառերը. այրել, մաքրել ես երկիրը իւր կեղտերից, քու կենդանութեան անսպառ աղբիւրը մեզանից էլ անպակաս արա ամեն ժամանակ, ամեն տարի, ամեն օր»։ Միևնոյն միջոցին հանգցնում են բոլոր լոյս տուող ճրագները*)։ Նոցանից ամենապատկառելի

---

*) Ի ա ն օ թ. Ա.յդ սովորութիւնից առաջ եկած է "Զրա—սոնդիւրան,, անուանակոչութիւնը, որի համար թաթարները խիստ խայտառակ պատմութիւններ են անում, որպէս թէ ընդհանուր խառնակութիւն է լինում այդ մթութեան մէջ։ Բայց այդ ամենը սուտ են։